



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաղբյուր համայնք, հասցե 9-րդփողոց 1-ինփակուղի 2-րդշենք
Հեռախոս 093960214, էլ. Փոստ katnaghbyur.lori@mta.gov.am

<< 23 >> << 12 >> 2016թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին


Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուր համայնքի հնգամյա
զարգացման ծրագիրը և ավագանու որոշումը:



Համայնքի ղեկավար՝

Ա. Սարգսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶ
ԿԱԹՆԱԴՐՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաղբյուր համայնք, 9-րդ փողոց 1-ին փակուղի 2-րդ շենք,
Հեռախոս 093960214, էլ. փոստ Katnaghbyur.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 28
« 19 » « 12 » 2016թ

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով՝

Կաթնաղբյուր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Կաթնաղբյուր համայնքի 2016-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիրը

h/h	Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ծեռնակահ
1	Հակոբյան Մակար			
2	Հակոբյան Սմբատ			
3	Հակոբյան Վրեժ			
4	Սավթալյան Կարապետ			
5	Սարգսյան Խաչատուր			

Համայնքի ղեկավար



Ա. Սավթալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար՝  /Ա. Սավթալյան /

Հաստատվել է համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19 -ի թիվ 28 որոշմամբ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Բովանդակություն

1. Ներածություն.....	3
2. ՀՀԶԾ կառուցվածքը.....	3
2.1. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.1.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ.....	6
2.1.3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումներ.....	6
2.1.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում.....	7
2.1.5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ.....	7
2.1.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....	8
2.2. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	9
2.2.1. Համայնքի զարգացման հեռահար նպատակի (տեսլականի) սահմանում.....	14
2.2.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակների սահմանում.....	14
2.2.3. ՀՀԶԾ հեռահար նպատակը (տեսլականը) և անմիջական նպատակներն ապահովող ծրագրերի նկարագրություն.....	14
2.3. ՀՀԶԾ ֆինանսավորում.....	19
2.4. ՀՀԶԾ մոնիթորինգ.....	19
3. ՀՀԶԾ վերաբերյալ իրազեկում.....	20
4. ՀՀԶԾ իրականացումը.....	20
5. ՀՀԶԾ գնահատում.....	20
6. ՀՀԶԾ կազմման գործընթացը.....	21

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համազյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Կաթնաղբյուր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը: Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը միտված է սահմանել համայնքի զարգացման տեսլականը առաջիկա հինգ տարիների՝ 2017-2021թթ.-ի համար, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել հանրային քննարկումների արդյունքում վեր հանված համայնքային խնդիրները, համայնքի առկա ռեսուրսները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները, համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները: Ջարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ): Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը, կազմման գործընթացը :

2. ՀՀԶԾ կառուցվածքը

Հնգամյա զարգացման ծրագիրը կազմված է 6 բաժիններից՝

1. Համայնքի իրավիճակի գնահատում.
2. Համայնքի տեսլականը, ռազմավարությունը և համայնքի զարգացման հնգամյա ծրագրի գերակայությունները.
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ.
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում, համայնքային սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի օտարման հնգամյա ծրագիր.
5. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մոնիթորինգ:
6. Կազմման գործընթաց

2.1 Համայնքի իրավիճակի նկարագրություն

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կաթնաղբյուր գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասում, Բազումի լեռների հյուսիսային լանջերին: Գյուղը հիմնվել է 1830 - ական թվականներին Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի Գյուլիերան գյուղի գաղթականների կողմից: Մինչ այդ հանդիսացել է անասնապահության համար հեռագնա արոտավայր: Գյուղի ընդհանուր տարածքը 11085.61հա է, բարձրադիր լեռնային է, ծովի մակարդակից բարձր է 1650 -1700մ, աչքի է ընկնում երկարատև և ցրտաշունչ ձմեռներով, ամռանը զով է: Գյուղի տարածքով հոսում է Ձորագետ գետը: Ստեփանավան քաղաքից հեռու է 18կմ, իսկ մարզկենտրոն՝ Վանաձորից 60կմ:

2.1.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Համայնքը գտնվում է մերձալպիան կլիմայական գուտում, որը հնարավորություն է տալիս հիմնականում զբաղվել անասնապահությամբ: Գյուղը հարուստ է ալպիան արոտավայրերով. աչքի է ընկնում սառնորակ աղբյուրներով, հանքային ջրերով: Հիասքանչ անտառը, փարթամ բուսականությունը ստեղծում են բոլոր նախադրյալները այն հանգստյան գոտի դարձնելու:

Ժողովրդագրություն և սոցիալական կազմ

Կաթնաղբյուր համայնքում բնակվում են 883 մարդ:

Գյուղի բնակչությունը կազմված է մոտ 255 ընտանիքներից /տնային տնտեսություններից/:

Ըստ շնչերի թվի գերակշռում են 4 շնչից բաղկացած ընտանիքները:

Վերջին տարիների ընթացքում բնակչության բնական աճի դինամիկան գրեթե անփոփոխ է:

Համայնքի բնակչության թիվը՝ առկա –883, այդ թվում՝

կանայք – 560

տղամարդիկ – 323

Բնակչության տարիքային կազմը՝

0-1 տարեկան – 11

1-2 տարեկան - 21

3-4 տարեկան – 23

5-6 տարեկան – 21

7-10 տարեկան - 46

11-14 տարեկան - 29

15-17 տարեկան - 28

18-22 տարեկան - 79

23-45տարեկան - 300

46-62տարեկան - 195

63 և ավելի 115

Սոցիալական կազմը, այդ թվում՝

թոշակառուներ – 114

միակողմանի ծնողագուրկ երեխաներ – 1

հայրենական պատերազմի մասնակիցներ – 1

հաշմանդամներ – 16

«Փարոս» ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ – 9

միայնակ չաշխատող թոշակառու - 33

Աղբյուրը՝ ՀՀ Լոռու մարզային վիճակագրական վարչություն, սոցիալական ապահովության Ստեփանավանի տարածքային բաժին, Կաթնաղբյուրի համայնքապետարանի աշխատակազմ:

1.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ

Համայնքի կառավարում

Համայնքի ավագանու անդամների թիվը – 5

համայնքի ղեկավարի աշխատակազմում ընդգրկված են 1 հայեցողական պաշտոն, կառուցվածքային ստորաբաժանումների 2 համայնքային ծառայող, առանձնացված ստորաբաժանումների 1 համայնքային ծառայող:

2.1.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն / Աղ. 1/ կազմում է մոտ 20000000 ՀՀ դրամ, որից սեփական եկամուտների բաժինը 38% է: Ներկայումս համայնքում գործող արդյունաբերական ձեռնարկություններ չկան: Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքները և ծավալները 1 տարվա կտրվածքով`

Միս- 35տ

Կաթ -900000 լիտր

Կարտոֆիլ 500տ

Խոտ 2000տ.

Գյուղատնտեսական արտադրանքը հիմնականում սպառվում է մարզի և ՀՀ տարածքում:

- Համայնքի տարածքում պատմական և մշակութային հուշարձաններ չկան, բայց հիասքանչ բնությունը, գյուղամերձ սոճու անտառը սառնորակ և հանքային աղբյուրները գյուղամիջյան և գյուղամերձ գետերը նպաստավոր պայմաններ են ստեղծում հանգստավայրերի, առողջապահական հաստատությունների հիմնման և զբոսաշրջության զարգացման համար:
- Գյուղում գործում է 1 միջնակարգ դպրոց նախատեսված 450 աշակերտի համար, փաստացի աշակերտների թիվը 107, ուսուցիչներ` 17 և 1 նախակրթարան, որտեղ հաճախում են 12 երեխա:
- Առողջապահական հաստատություններից գյուղում առկա է 1 բուժամբուլատորիա, 1 բուժաշխատող:
- Ընտանեկան նպաստներ համակարգում գրանցված ընտանիքների թիվը - 12:

2.1.3 Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումներ

Համայնքի վարչական տարածքում գալիք հինգ տարիների համար պետության և համայնքի կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը`

1. Հիմնանորոգել միջհամայնքային` Ստեփանավան – Կաթնաղբյուր ճանապարհը, որը կնպաստի ապրանքափոխադրումների ինքնարժեքի նվազեցմանը ինչն էլ կխթանի համայնքի տնտեսական զարգացմանը :
2. Մասնավոր ընկերությունների ներգրավմամբ գյուղում հիմնել Կաթի վերամշակման ձեռնարկություն, որը կխթանի անասնազխաքանակի աճին, կկրճատի արտադրանքի տեղափոխման ծախսերը, կստեղծի նոր աշխատատեղեր:
3. Տեղացի և արտասահմանյան բարերարների միջոցներով հիմնել ինժեներական լաբարատորիա, ինչը կխթանի տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների և համայնքի միջև կապին, կնպաստի նոր որակի մասնագետների և ձեռներեցների ձևավորմանը:

2.1.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում

Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Աղյուսակ 1

N	Մուտքերի անվանում	2015 փաստ.	2016 նախատ	2016 փաստ.	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ.	2020 կանխ.	2021 կանխ.
1	Ընդամենը եկամուտներ	17182.4	20045.8		21280.4	21383.7	21687.7	21990.7	22293.7
2	Հողի հարկ	3027.8	5283.9		5336.7	5336.7	5336.7	5336.7	5336.7
3	Գույքահարկ փոխադրամիջոցների	548.9	1037.2		1060.5	1100.0	1200.0	1300.0	1400.0
4	Տեղական տուրքեր	22.0	27.0		33.0	35.0	37.0	39.0	40.0
5	Պաշտոնական դրամաշնորհներ	12369.6	13642.2		13642.2	13700.0	13800.0	13900.0	14000.0
6	Հողի վարձակալություն	1210.1	1530.2		1178.0	1200.0	1300.0	1400.0	1500.0
7	Տեղական վճարներ	4.0	10.0		10.0	12.0	14.0	15.0	17.0

2.1.5 Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններն են՝

- Համայնքը նախկին շրջկենտրոն՝ Ստեփանավան քաղաքին միացնող միակ ճանապարհը հիմնովին քանդված է, ինչը դժվարեցնում է ապրանքների արտահանումը սպառողական շուկաներ:
- Գյուղը գազաֆիկացված չէ, որն էլ իր հերթին էներգետիկ տեսանկյունից բացասական է անդրադառնում գյուղմթերքների վերամշակման ձեռնարկություններ հիմնելուն:
- Համայնքային կենտրոն, մշակույթի տուն և սպորտդահլիճ չլինելը խոչընդոտում է ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպմանը՝ երիտասարդության ներգրավմամբ:
- Համայնքներում գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող կարևորագույն գործոններից է գյուղմթերքի իրացումը և ցածր գինը:

2.1.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքում առկա մեծ աշխատուժը, մասնագետների առկայությունը հնարավորություն է տալիս կազմակերպել կրթության ու դաստիարակության, մշակութային, շինարարական և այլ աշխատանքներ:
- 2015թ.-ից համայնքը ունի արտաքին լուսավորության ցանց:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքը չունի ջրամատակարարման միասնական ցանց, գործող ջրագծերն հիմնանորոգման կարիք ունեն: Համայնքի ջրամատակարարումը իրականացվում է գյուղամերձ սարերի ակունքներից, խողավակաշարերն ունեն 40-50 տարվա վաղեմություն: Չկա ջրահեռացման համակարգ:
- Անբարեկարգ վիճակում են ինչպես ներհամայնքային այնպես էլ համայնքը շրջկենտրոնին միացնող ճանապարհները:
- Տրանսպորտային հաղորդակցության վիճակը շրջկենտրոնի և հարակից գյուղական համայնքների հետ դեռևս մնում է ոչ բարվոք:
- Շատ ցածր մակարդակի է գտնվում գյուղապետարանի նյութատեխնիկական համալրվածությունը:
- Աշխատուժի առաջարկը շարունակում է մնալ անհամեմատ մեծ պահանջարկից:
- Շարունակում է բաց մնալ երիտասարդների և մեծահասակների ժամանցի կազմակերպման հիմնախնդիրը:
- Համայնքը գազաֆիկաված չէ, ձմեռը երկարատև է, կա վառելիքի ձեռքբերման խնդիր:
- Վարելահողերն ու խոտհարքերը հիմնականում գտնվում են թեքությունների վրա, որոնք լրացուցիչ դժվարություններ են առաջացնում գյուղտեխնիկայի արդյունավետ օգտագործմանը, ինչն էլ բացասաբար է ազդում արտադրանքի ինքնարժեքի վրա:
- Առատ տեղումների, գերխոնավ հողերի պատճառով` ցածր բերքատվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համայնքը հարուստ է ալպիան արոտավայրերով և մարգագետիններով, ինչը ստեղծում է լավ նախադրյալներ անասնապահության զարգացման համար:
- Համայնքը հարուստ է լեռնային գետերով, որոնք կարելի է օգտագործել էներգետիկ նպատակներով:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրի ներհամայնքային համակարգը մաշված է հատկապես ձմռանը ստեղծվում է վթարային իրավիճակներ:
- Գազաֆիկացման բացակայությունը հանգեցնում է լրացուցիչ ծառահատումների, որի հետևանքով նվազում են անտառային ծածկույթները:
- Վարելահողերի մեծ մասը ցածր բերքատվության, համապատասխան գյուղտեխնիկայի, պարարտանյութերի և այլ պարագաների բացակայության պատճառով չեն մշակվում: Արդյունքում վարելահողերը աստիճանաբար վերածվում են խոտհարքերի և արոտավայրերի, ենթարկվում են էռոզիայի և որակազրկվում:
- Միջհամայնքային վատ ճանապարհների հետևանքով գյուղմթերքի իրացման լրացուցիչ խնդիր է առաջանում, բացասաբար է ազդում անասնապահության և հողագործության զարգացման վրա:
- Սոցիալական վիճակի վատթարացմամբ պայմանավորված նկատվում է արտագաղթի աճ:

2.2 Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

ՀՀԶԾ իրականացման արդյունքում կբարելավվի համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակը, որը կնպաստի արտագաղթի կասեցմանը, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը և համայնքի կայուն զարգացմանը:

- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի կրճատումը ի հաշիվ գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման:
- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ ի հաշիվ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքների վարձակալությամբ տրամադրելու:
- *Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին 30%*
- *Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, 10%*
- *Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ 5%*

ԾՐԱԳԻՐ 1 ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ

Համայնքի գազաֆիկացման աշխատանքները կատարվել է 1987թ.ին և մինչ օրս չի գործարկվել: Կաթնաղբյուր գյուղի գազամատակարարումը նախատեսված է իրականացնել Կաթնառատ գյուղը սնող մ/ճ գազատարից: Պահպանվում է միջին և ցածր ճնշման խողովակաշարերը, ԳԷԲՊ քաժնի ԳԿՎ հետազոտման և ախտորոշման ծառայության կողմից կատարվել է համայնքի ստորգետնյա գազատարի կոռոզիոն վիճակի համալիր հետազոտում: Համապատասխան կազմակերպությունների հետ կազմվել է ծրագրի նախագծահաշվարկային փաստաթղթերը:

Ծրագրի հիմնական նպատակն է

- Համայնքը գազաֆիկացնել:
- Նպաստել Կաթի վերամշակման ձեռնարկության ստեղծմանը:
- Բնական գազի առկայությունը կնպաստի ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացմանը:
- Զեռուցման խնդրի լուծումը կհանգեցնի անտառահատումների կրճատմանը:

Ծրագրի հիմնախնդիրները.

- Ֆինանսական միջոցների առկայության դեպքում իրականացնել գյուղի մ/ճ գազատարի կառուցումը և գազաֆիկացումը:

Ֆինանսական միջոցների գնահատումը

Նախնական հաշվարկները ցույց են տալիս, որ միջին ճնշման ստորգետնյա գազատարի ընդամենը 1500մ երկարությամբ հատվածն է անհրաժեշտ փոխարինել պոլիէթիլենային խողովակներով, որի արժեքը մոտավորապես կազմում է 15000000 ՀՀ դրամ:

Ներհամայնքային ցանցի խողովակների առկայությունը կկրճատի գազաֆիկացման հետագա աշխատանքների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, որը մոտավորապես կազմում է 25000000 ՀՀ դրամ:

ԾՐԱԳԻՐ 2

ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՂՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1960-90թ.թ.: Զրագծի երկարությունը կազմում է 7.5կմ: Համայնքը չունի ջրամատակարարման միասնական ցանց: Խմելու ջուրը գյուղ է բերվում գյուղամերձ սարերի աղբյուրների ակունքներից: Մոտ 45-50 տարվա վաղեմություն ունեցող ջրագծերը ենթարկվել են ֆիզիկական մաշվածության և հիմնանորոգման կարիք ունեն: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հիմնանորոգման ենթակա ջրագծերն անցնում են լեռնային տարածքով, որտեղ անձրևաջրերից ու գարնան ձնհալից առաջանում են սելավներ և մեծ վնաս հասցնում խողովակաշարին: Համայնքի հրատապ խնդիրներից է ջրամատակարարման համակարգի հիմնանորոգումը: Սույն ծրագրով առաջարկվում է հիմնանորոգման ենթարկել համայնքի ջրամատակարարման ցանցը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են.

- Նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները
- Կանխել ջրամատակարարման ցանցում անձրևաջրերի և սելավաջրերի ներթափանցումը:
- Բարձրացնել խմելու ջրի որակը, և հասանելի դարձնել ազգաբնակչությանը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, համայնքը կապահովվի որակյալ խմելու ջրով, կնվազի խմելու ջրի կորուստները, կբարելավվի գյուղի ազգաբնակչության սոցիալ- տնտեսական պայմանները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական մոտավոր հաշվարկներով 7.5կմ երկարությամբ ջրագծերի հիմնանորոգման աշխատանքների արժեքը կազմում է մոտ 30000000 /երեսուն միլիոն/ ՀՀ դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Քանի, որ համայնքը չունի գյուղապետարանի շենք գրադարան, միջոցառումների կազմակերպման համար դահլիճ և խաղասենյակներ ապա համայնքային կենտրոնի կառուցումը համայնքի առաջնահերթ խնդիրներից մեկն է հանդիսանում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿ

- Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը
- Տոնական օրերին կազմակերպել միջոցառումներ և երեկոյթներ
- Տրամադրել խաղասենյակներ շախմատի, և այլ խաղերի համար
- Վերականգնել համայնքի գրադարանը:
- Հատկացնել սենյակներ գյուղապետարանի համար:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Բնակչության ազատ ժամանակը ավելի հետաքրքիր ու արդյունավետ անցկացնել
- Ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար:
- Բարձրացնել գյուղապետարանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայության որակը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մոտ 883 բնակիչ ունեցող համայնքի վերը նշված պայմանները բավարարող կառույցը նախնական հաշվարկներով արժե մոտ 35000000 /երեսունհինգ միլիոն/ դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է մոտ 5կմ, որից 2կմ-ը կենտրոնական ճանապարհն է: Գյուղամիջյան փողոցները գրունտային են: Սույն ծրագրով առաջարկվում է իրականացնել խճալցումներ, հնարավորությունների դեպքում ասֆալտապատել գյուղի կենտրոնական ճանապարհը և բարեկարգել մյուս փողոցները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է

- Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար երթևեկության նորմալ պայմաններ տարվա բոլոր եղանակների համար:
- Վերացնել փողոցների ջրափոսերը
- Մաքրել և բարեկարգել ջրահեռացման ակոսները:

Ծրագրի հիմնախնդիրները

- Համագործակցելով համապատասխան կազմակերպությունների հետ, կազմել ծրագրի իրականացման նախագծա-հաշվարկային փաստաթղթերը:
- Կատարել ավազի խճաքարի և կավի խառնուրդի փռում համայնքի փողոցներում, հետագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքները:

Ֆինանսական միջոցների գնահատում

- Նախնական հաշվարկները ցույց տվեցին, որ խճալցումը կարժենա մոտ 3000000 /երեք միլիոն / ՀՀ դրամ:

2.2.1 Համայնքի զարգացման հեռահար նպատակի (տեսլականի) սահմանում

ՀՀԶԾ-ն սահմանում է համայնքի զարգացման տեսլականը, ակնկալվող փոփոխությունները և սահմանում է քյլերի այն հաջորդականությունը, որոնց իրականացմամբ կարձանագրվի ցանկալի արդյունք: Արդյունքները լինելու են ինչպես որակական այնպես էլ քանակական:

Որակական արդյունքներով պայմանավորված կբարձրանա համայնքի բնակչության

կենսակերպը: Համայնքը կդառնա բարեկեցիկ և գրավիչ, կստեղծվեն նոր աշխատատեղեր:

Հիասքանչ բնությունը, գյուղամերձ անտառը, սառնորակ աղբյուրները, հանքային ջրերը, ամառային զով եղանակը և մաքուր օդը պայմաններ են ստեղծում ստեղծել հանգստյան գոտիներ: Ձմռանը ձյան շերտի երկարատև պահպանությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում լեռնադահուկային սպորտի զարգացման համար: Մերձալպիան արոտավայրերի առկայությունը խթան է հանդիսանում անասնապահության զարգացմանը: Ներդրողների ներգրավմամբ ստեղծել էկոլոգիապես մաքուր գյուղմթերքի արտադրության ձեռնարկություններ: Լուծել գյուղմթերքի իրացման խնդիրը, որը կնպաստի անասնազվխաբանակի և ցանքատարածքների ավելացմանը, ինչը կնպաստի գյուղացիների սեփական եկամուտների զգալի աճին:

2.2.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակների սահմանում

Եթե զարգանան գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը ապա կբարելավվի համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը և կապահովվի համայնքի կայուն զարգացումը: Համայնքում կստեղծվի բարենպաստ գործարար միջավայր, կբացվեն նոր աշխատատեղեր, համայնքի սոցիալական վիճակի բարելավվումը կբացառի արտագաղթը, որը կարևոր ռազմավարական նշանակություն ունի ոչ միայն համայնքի այլ Հայաստանի Հանրապետության համար: Համայնքի կնպաստի նաև համայնքի մշակութային կյանքի աշխուժացմանը:

2.1.1 ՀՀԶԾ հեռահար նպատակը (տեսլականը) և անմիջական նպատակներն ապահովող ծրագրերի նկարագրություն

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Գազաֆիկացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի գազաֆիկացում					
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի գազաֆիկացում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
40000000	10000000	15000000	15000000			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքի բնակչության կենցաղային խնդիրների լուծում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	2.					
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. միջին ճնշման գազատարի կառուցում 3141գծ/մ</p> <p>1.2. ցածր ճնշման գազատարի կառուցում 3500 գծ/մ</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1.</p> <p>2.2.</p>					
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 1000000</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 3000000</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 40000000</p>					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	«Վ» պետբյուջե					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական ռեսուրսների բացակայություն					
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2016-2018թթ					
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Համայնքը Գազաֆիկացնելու նպատակով 2016թ.-ին իրականացվել է 3141 գծ/մ մ/ճ ստորգետնյա գազատարի կոռոզիոն վիճակի հետազոտման աշխատանքներ, կազմվել է միջին և ցածր ճնշման գազատարերի նախագծա-նախահաշվային փաստաթղթեր որը կազմել է 1000000 «Վ» դրամ: Համայնքի գազաֆիկացումը կբարելավի համայնքի բնակչության սոցիալ-կենցաղային իրավիճակը, կլուծի ջեռուցման խնդիրը ինչը կհանգեցնի անտառահատումների կրճատմանը: Կնպաստի համայնքում վերամշակման ձեռնարկությունների հիմնմանը/ Կաթի վերամշակման ձեռնարկություն/: Բնական գազի առկայությունը կնպաստի ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացմանը:</p>					

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«ջրամատակարարում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Խմելու ջրի ցանցի կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ	Բարձրացնել խմելու ջրի որակը, և հասանելի դարձնել ազգաբնակչությանը:						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	30000000	50000000	100000000	150000000	-	-	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բարձրացնել խմելու ջրի որակը, նվազեցնել ջրի կորուստները						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. ներհամայնքայի խողովակաշարերի հիմնանորոգում 20 1.2. կապտաժների վերանորոգում, ջրհավաք կայանի կառուցում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 50000000 Կապիտալ ծախսեր՝ 250000000 Ընդհանուր բյուջեն՝ 300000000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Լոռու մարզպետարան, ՀՀ պետբյուջե						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքը չունի ջրամատակարարման միասնական ցանց: Խմելու ջուրը գյուղ է բերվում գյուղամերձ սարերի աղբյուրների ակունքներից: Սոս 45-50 տարվա վաղեմություն ունեցող ջրագծերը ենթարկվել են ֆիզիկական մաշվածության և հիմնանորոգման կարիք ունեն: Իրականացնելով այս ծրագիրը, համայնքը կապահովվի որակյալ խմելու ջրով, կնվազի խմելու ջրի կորուստները, կբարելավվի գյուղի ազգաբնակչության սոցիալ- տնտեսական պայմանները:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«համայնքային կենտրոն»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքային կենտրոնի կառուցում					
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքում մշակույթի կենտրոն ունենալ					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
35000000	0	0	0	10000000	25000000	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Մշակութային կյանքի բարելավում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	2.					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
2016		2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. համայնքի կենտրոնի շենքի կառուցում 1.2. գույքի ձեռք բերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1500000 Կապիտալ ծախսեր՝ 33500000 Ընդհանուր բյուջեն՝ 35000000					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Լոռու մարզպետարան, ՀՀ պետբյուջե, բարեգործական կազմակերպություններ					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն					
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2020-2021թթ					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Քանի, որ համայնքը չունի գյուղապետարանի շենք գրադարան, միջոցառումների կազմակերպման համար դահլիճ և խաղասենյակներ ապա համայնքային կենտրոնի կառուցումը համայնքի առաջնահերթ խնդիրներից մեկն է հանդիսանում:					

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Ներհամայնքային ճանապարհներ»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում					
Ծրագրի անմիջական նպատակ	Ներհամայնքային ճանապարհների բարելավում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
3000000	1500000	1500000				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3. Մշակութային կյանքի բարելավում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	0					
	4.					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
2016		2017	2018	2019	2020	2021
0						
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. խճայցում 1.2. հիմնանորոգում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 150000 Կապիտալ ծախսեր՝ 150000 Ընդհանուր բյուջեն՝ 3000000					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բյուջե, Լոռու մարզպետարան					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն					
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է մոտ 5կմ, որից 2կմ-ը կենտրոնական ճանապարհն է: Գյուղամիջյան փողոցները գրունտային են: Սույն ծրագրով առաջարկվում է իրականացնել խճայցումներ, նորոգել ճամփեզրի ջրահեռացման ակունքերը:					

2.3 ՀՀԶԾ ֆինանսավորում

ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներն են

- Համայնքի սեփական եկամուտները
- Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական և անշարժ գույքի օտարումից միջոցներ
- բարեգործական միջոցների ներգրավում
- Պետրոյուջե

Ծրագրի անվանում	Անհրաժեշտ միջոցներ	Առկա միջոցներ	Ակնկալվող միջոցներ					
			2016	2017	2018	2019	2020	2021
գազաֆիկացում	40000000	10000000	1000000	10000000 սեփ/եկ. պետրոյուջե	15000000 Սեփ/եկ. պետրոյուջե	14000000 Սեփ/եկ. պետրոյուջե	-	-
Ջրամատակարարում	30000000	-	-	5000000 Սեփ/եկ Պ/բյուջե Բ/Կ	10000000 Սեփ/եկ. Պ/բ Բ/Կ	15000000 Սեփ/եկ Պ/բ Բ/Կ	-	-
Համայնքային կենտրոն	35000000	-	-	-	-	-	10000000 Սեփ/եկ Պ/բ	1500000 0 Սեփ/եկ Պ/բ
Ներհամայնքային ճանապարհ	3000000	1500000	-	1500000 Սեփ/եկ Բ/Կ	1500000 Սեփ/եկ Բ/Կ	-	-	-

2.4 ՀՀԶԾ մոնիթորինգ

ՀՀԶԾ մոնիթորինգի համար անհրաժեշտ է մշակել մոնիթորինգի պլան, որը սահմանում է մոնիթորինգային ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, աղբյուրն ու մեթոդը: Մոնիթորինգային ցուցանիշների մասին տեղեկություններ պետք է հավաքագրվեն կիսամյակային կամ տարեկան կտրվածքով: Մոնիթորինգի հաշվետվությունը համայնքի ավագանուն պետք է ներկայացվի ամեն տարի, հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակում: Հաշվետվության մեկ օրինակ, միայն հեռահար և անմիջական նպատակների մասով, ուղարկվում է ՀՀ ՏԿԶՆ տեղական ինքնակառավարման վարչություն:

3. ՀՀԶԾ վերաբերյալ իրազեկում

Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո, ՀՀԶԾ-ն հրատարակվում է: Համայնքի բնակչության համար առավել մատչելի դարձնելու համար, պատրաստվում և հրատարակվում են հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկություններ:

4. ՀՀԶԾ իրականացումը

Համայնքի ղեկավարը տարեկան բյուջեների նախագծերը մշակելիս հաշվի է առնում համայնքի բնակչության կենսական շահերը, ՀՀԶԾ-ն, ինչպես նաև առկա ռեսուրսները: Միաժամանակ, համայնքի բյուջեի ձևավորման հիմնական սկզբունքներից մեկը վերաբերում է հենց համայնքի ավագանու կողմից ընդունված ՀՀԶԾ-ի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորմանը: Սա նշանակում է, որ համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ծրագրերն են, որոնց իրականացման համար դրանց բյուջեներով կամ նախահաշիվներով հաշվարկվել են համապատասխան եկամուտներ և ծախսեր: Գործնականում, ՀՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը, ծառայությունները և միջոցառումները) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը, իսկ համայնքի բյուջետային գործընթացն ամբողջովին կանոնակարգված է ՀՀ բյուջետային օրենսդրությամբ:

5. ՀՀԶԾ գնահատում

ՀՀԶԾ իրականացումը պետք է գնահատվի: Գնահատումն ավարտված կամ իրականացվող ծրագրի իրականացման և արդյունքների պարբերական և օբյեկտիվ ուսումնասիրություն է: Իրականացված կամ իրականացման փուլում գտնվող ծրագրերի արդյունավետության և ծախսարդյունավետության գնահատման միջոցով:

ՀՀԶԾ-ի իրականացումն ապահովելու է համայնքի կայուն զարգացումը:

Նշված ծրագրերը համայնքի համար հանդիսանում են առաջնահերթ խնդիրներ, որոնց լուծումները խթան կհանդիսանան համայնքի զարգացմանը: Ստացված արդյունքներն կարդարացնեն այն ծախսերը, որոնք իրականացվելու են արդյունքներն ապահովելու համար:

Գնահատման համար տեղեկատվական բազան ապահովվում է մոնիթորինգի միջոցով:

6. ՀՀԶԾ կազմման գործընթացը

Կարևորելով մասնակցային կառավարումը, ՀՀԶԾ մշակման, ընդունման և իրականացման մոնիթորինգի գործընթացները այնպես է կազմակերպել, որոնք ապահովում են համայնքի բնակչության, քաղաքական հասարակության կազմակերպությունների, գործարար շրջանակների առավելագույն ընդգրկվածությունը: Համայնքի ղեկավարը, ով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում ՀՀԶԾ նախագիծը, ստեղծել է աշխատանքային խումբ՝ գործարար շրջանակի ներկայացուցիչներին, ովքեր օգնել են համայնքի ղեկավարին մշակել մի փաստաթուղթ, որն արտահայտում համայնքի ողջ բնակչության հավաքական կամքն ու ցանկությունը:

Պարտադիր խնդիր	Բյուջետավորված միջոցներ	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման		
		2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ
1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում	0								
2. Համայնքի գույի և դրամական միջոցների կառավարում	0								
3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն	0								
4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ	0								
5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն	12500000	2500000	2500000	2500000	2500000	2500000	10000000	0	0
6. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը	500000		500000						
7. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը									
8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը	7000000	0	7000000	0	0	0	0	0	0

Ն ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
 ուր
 թթ.)

Ա աղբյուրներ			Ծախսերի դասեր		Ֆինանսավորման կարգավիճակ			
Բարեգործություն/սվիրատվություն	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ	Ներկայացվել է ֆինանսավորման հայտ	Ֆինանսավորման հարցը լուծված չէ
0	0	0	0	0	0 առկա է			
					առկա է			
0		0	500000	6500000				լուծված չէ

9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում	0								
10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը	0								
11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում	0								
12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը	20000000	13000000	2000000	2000000	1500000	1500000	0	0	0
14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում									
15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում	1000000				500000	50000	0	0	0
16. Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում	1000000	100000	200000	200000	250000	250000	0	0	0
17. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում	0								
19. Բարեգործության խթանում	0								

0	0	0	0	20000000				լուծված չէ
0	0	0	1000000		առկա է			
0	0	0	1000000		առկա է			

9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային հասարակայնի ներառվածության բնագավառում և շահագործում																				
Համայնքի բնակիչների թվազատկանությունը համայնքը նպատակով հասարակական տրանսպորտի աշխատանքներին	թվադար														X	Համայնքի բնակիչներ	Հարցում			
Համայնքային ներառվածության հասնապահունակության արդյունավետ համապատասխանումը համայնքի հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	1															X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն		
Համայնքում կառավարվող ակտորային կազմակերպությունների ակտորային կազմակերպությունների թիվը	0		1	1			10				20				30			X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքը սպասարկող հասնապահուն տրանսպորտի պարունակ 5 և ավելի տարի հնուց ունեցող մեքենաների հարաբերական ակտիվացման մեքենաների թվազատկանությունը	2																	X	Համայնքային հարաբերական ակտիվացման մեքենաների թվազատկանությունը	Փաստաթղթային ուսումնասիրություն/ հարցում
Համայնքի ներառվածության տույն գտնվող հասնապահուն տույն տարի անվճարաբեր հատկանի կիրառության հարաբերական համայնքի ներառվածության տույն գտնվող հասնապահուն կիրառությանը արտահայտված տոկոսով	0		2								0							X	Համայնքային հարաբերական ակտիվացման տույն գտնվող հասնապահուն կիրառությանը արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն/ հարցում
			0	0							0									
10. Արհեստագործական արտադրանքի արտադրություն																				
Համայնքում բնակվող զինազարդ թաղաքացիների գրանցամատյանի վարում	արևա																	X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն
	արևա		արևա																	
11. Աշխարհային ռեսուրսների նվազեցում և արտադրող իրազեակցություն																				
Համայնքում սպասարկող կամ թաղաքացիների կողմից	արևա		արևա	արևա														X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքում թաղաքացիական պաշտպանության շտաբի ակտիվություն	արևա		արևա	արևա														X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն
Միտակցող իրազեակցություն բնակչության պաշտպանության ակտիվությունը բնակչության ընդհանուր թվի մեջ	մասնաձև																	X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն
Կամավորական իրազեակցության ակտիվությունը բնակչության ընդհանուր թվի մեջ	չկա		անորոշական	անորոշական							անորոշական				անորոշական			X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն
Կամավորական իրազեակցության ակտիվությունը բնակչության ընդհանուր թվի մեջ	չկա		չկա	չկա							արևա				արևա			X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն
12. Գյուղական բնակավայրի կառուցում																				
Համայնքի գյուղատնտեսության զարգացումը	1																	X	Գյուղատնտեսության զարգացման արտահայտված տոկոսով	Հարցում կամ խնային հարցազրույց/ֆոտո խումբ
Բերրազիության տարեկան աճ	1		0	5			7				8				9			X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Հարցում
Համայնքի մշակվող գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողերի հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	23		1	1			2				2				2			X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Հարցում
			23	23			25				25				25					
13. Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն																				
Համայնքում էներգիայի արտադրությունը	90																	X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքի կառավարվող հասնապահուն տրանսպորտի ակտիվացման արտահայտված տոկոսով	70		90	90			100				100				100			X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքի մաքրման ծախսերի արտահայտված տոկոսով	արևա		արևա	արևա			արևա				արևա				արևա			X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն
			արևա	արևա			արևա				արևա				արևա					
14. Զբոսաշրջային հնամենի և մշակութային համայնքային զարգացում																				
Համայնքի մշակվող գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողերի հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	0		0	0			0				5				10			X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն/ հարցում
Համայնքի մշակվող գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողերի հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	0		0	0			0				3				4			X	Համայնքային հարաբերական ակտիվացման արտահայտված տոկոսով	Փաստաթղթային ուսումնասիրություն/ հարցում
			0	0			0				3				4					5

